ՄԱՐԻԱՆՆԱ ԱՊՐԵՍՅԱՆ

ՍՈՒՐԲ ԹԵՈԴՈՐԱՅԻ ՎԱՐՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՀՈՒՆԱԿԱՆ ՀԱՅՍՄԱՎՈՒՐՔԱՅԻՆ ԲՆԱԳՐԵՐԸ ԵՒ ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախքան հայկական եւ հունական հայսմավուրքային բնագրերի ուսումնասիրությանն անցնելը, նյութի հստակ պատկերացման համար համառոտ կներկայացնենք սուրբ Թեոդորա Աղեքսանդրացու վարքը:

Սուրբ Թեոդորա Ալեքսանդրացու հիշատակը Հայոց Հայսմավուրքներում դրված է սեպտեմբերի 11-ին:

Սուրբ Թեոդորան Աղեքսանդրիա քաղաքից էր եւ ապրում էր Զենոն կայսեր գահակալության տարիներին՝ 472 կամ 474 թվականներին: Նա ամուսնացած էր մի հարուստ, պատվավոր եւ օրինապաշտ մարդու հետ, եւ նրանց ընտանիքը քրիստոնյային վայել առաքինի կյանք էր վարում: Սակայն որոշ ժամանակ անց սատանան ինչոր մեծահարուստ երիտասարդի՝ իշխանազնի, միջոցով փորձություններով ու խոչընդոտներով լի որոգայթ է լարում Թեոդորայի դեմ: Երիտասարդը հույժ սիրահարված լինելով Թեոդորայի չքնաղ արտաքինին՝ տարվում է նրանով եւ ցանկանում տիրանալ նրան: Իր նպատակին հասնելու համար նա դիմում է կախարդ կնոջ օգնության, որը գործի դնելով իր սատանայական հնարքները՝ Թեոդորայի սրտում բուռն կիրք է առաջացնում եւ նրան մղում շնության:

Մեղանչելուց հետո Թեոդորան գիտակցում է իր մեղքը եւ շատ զղջում: Երբ նա վերադառնում է տուն, որոշում է ամուսնուց գաղտնի մենաստան փախչել, բայց որպեսզի ամուսինն իրեն չգտնի, նա տղամարդու զգեստներ է հագնում, հանում կանացի արդուզարդը, սափրում գլուխը եւ հեռանում դեպի Ութուտասնեկի վանք:

Այդպիսով սուրբն անհետանում է տանից եւ որպես տղամարդ ընդունվում վանականների կողմից՝ ներկայանալով Թեոդորոս անվամբ: Առաջին ութ տարիները Թեոդորան այնտեղ անցկացնում է ծանր աշխատանքներով, ծնրադրումներով, աղոթքներով եւ խիստ պահեցողությամբ:

Ութ տարի անց սատանան դարձյալ փորձության է ենթարկում նրան, այս անգամ զրպարտության միջոցով, համաձայն որի, իբրեւ թե Թեոդորան շնացել է մի կնոջ հետ, եւ այդ կապից երեխա է ծնվել: Չցանկանալով վանականներին բացահայտել իր կանացի էությունը՝ Թեոդորան ընդունում է իր մեղքը եւ վանահոր հրամանով երեխայի հետ միասին արտաքսվում վանքից: Յոթ տարի սուրբը ծանր տառապանքներով ու դժվարություններով հոգ է տանում երեխայի մասին՝ նրան սնելով ոչխարի կաթով: Այնուհետեւ վանական եղբայրները տեսնելով նրա սրբակենցաղ վարքը՝ խնդրում են վանահորը, որպեսզի Թեոդորային կրկին վանք ընդունի, որտեղ էլ մի քանի տարի անց սուրբը խաղաղության մեջ ավանդեց հոգին Տիրոջը: Երբ վանականները տեղեկացան նրա մահվան մասին եւ նրա

աճյունը հուղարկավորության պատրաստեցին, հայտնաբերեցին նրա կին լինելու փաստը եւ հասկացան, որ այդքան տարիներ զուր տեղը գրպարտել են նրան:

Շնորհիվ սուրբ Թեոդորայի խիստ պահեցողության եւ ապաշխարության, Աստված նրան շնորհել է բժշկելու եւ հրաշագործելու զորությամբ:

Հայկական բնագիրը հունականի հետ համեմատելու համար որպես հիմք ունեցել ենք Հայոց Հայսմավուրքների չորս խմբագրությունները՝ Հովսեփ Կոստանդնուպոլսեցու թարգմանությունը 973[1], Տեր-Իսրայելի[2] (ԺԸ դ.), Գրիգոր Անավարզեցու[3] (ԺԳ դ.) եւ Գրիգոր Ծերենցի (ԺԴ դ.): Ինչ վերաբերում է հունական բնագրերին, ապա օգտվել ենք Վասիլիոս թագավորի[4], Կոստանդնուպոլսի[5] եւ Մաքսիմոս Մարգունիոսի հայսմավուրքներից[6]:

Նախ նշենք, որ հայկական տեքստերից միայն Գրիգոր Ծերենցի խմբագրության մեջ է, որ սկզբում չի նշվում սուրբ Թեոդորայի ամուսնացած կին լինելու մասին, որը խաբվեց մեկ այլ հարուստ երիտասարդի՝ իշխանի որդու կողմից: Թեոդորայի առաքինի եւ օրինապաշտ քրիստոնյա ամուսնու անունը նշված է միայն Կոստանդնուպոլսի Հայսմավուրքում՝ Պաֆնուտիոս: Գրիգոր Ծերենցը պարզապես գրում է, որ նա գեղեցիկ տեսքով կին էր, ի տարբերություն որի հայկական մյուս բոլոր խմբագրություններում կարճ նշվում է՝ «էր առն կին»:

Հովսեփ Կ. Պոլսեցու խմբագրությունում այս վարքը բավական ծավալուն է (մենք պայմանականորեն բաժանել ենք 45 պարբերությունների): Վարքի այս խմբագրությունը նույնությամբ վերցրել են Հովսեփ Կ. Պոլսեցուց Կիլիկյան բոլոր Հայսմավուրքները, ինչպես նաև Տեր-Իսրայելը: Գրիգոր Ծերենցի խմբագրությունը նույնպես ունի Սուրբ Թեոդորայի, բայց ավելի համառոտ (34 պարբերություն): Այստեղ բացի Սուրբ Թեոդորայի վարքի համեմատաբար հակիրճ նկարագրությունից, պակասում են նաեւ նրա կատարած հրաշքների մասին փոքրիկ պատմությունները, նրա խստակյաց պահեցողության եւ ճգնակեցական վարքի մասին հատվածները եւ սատանայի կողմից նրան հասցված փորձություններն ու տանջանքները:

Ինչ վերաբերում է հունական հայսմավուրքային բնագրերին, ապա դրանք հայկական բնագրերի համեմատությամբ չափազանց հակիրճ են շարադրված, իսկ ավելի կոնկրետ Վասիլիոսի (Ժ դար) բնագիրը բաղկացած է 7 պարբերությունից, Կ Պոլսինը (Synaxarium Eccl. Constantinopolitanae Ժ դար)՝ 9, իսկ Մաքսիմոս Մարգունիոսի բնագիրը (ԺԴ դար)՝ 11:

Հունական երեք բնագրերը տալիս են սուրբ Թեոդորայի վարքի ընդհանուր նկարագիրը: Վասիլիոս կայսեր Հայսմավուրքում խոսվում է, որ նա ապրել է Զենոն կայսեր

1 Վիեննա, 1048, էջ 19բ -24ա:

2 Վենետիկ, 631, էջ 356բ -362ա:

3 Վենետիկ, 710, էջ 33ա -37ա:

4 **J. - P. Migne,** Ελληνική Πατρολογία, Menologium Graecorum Basilii Porphyrogeniti Imperatoris Jussu Editum, Μήνι Σεπτέμβριος, τομ. 117, Αθήναι, 2005, էջ 44.

5 H. Delehaye, Synaxarium Eccl. Constantinopolitanae, Bruxellis, 1902, էջ 33-35.

6 **Μαργούνιος Μάξιμος,** Επίσκ. Κυθήρων, Βίοι αγίων εκ της ελληνικής γλώττης ήτοι εκ των συναηαρίων μεταφρασθέντες, Βενετία, 1621.

օրոք, հետո մեղանչել է, ապաշխարել, հագել փղամարդու զգեստներ եւ գնացել արանց վանք: Այնուհետեւ ասում է, որ սատանայի կողմից կրել է բազում փորձություններ եւ պայքարել դրանց դեմ: Հետո կատարել է հրաշքներ եւ մահացել:

Միայն Synaxarium Eccl. Constantinopolitanaeի բնագրում է նշվում, որ սուրբ Թեոդորայի ամուսնու անունը Դափնուտիոս է: Ավելին, այստեղ խոսվում է նաեւ նրա ճգնության, ծոմապահության, ինչպես նաեւ զրպարտության մասին, որի պատճառով նրան նորածին մանկան հետ վռնդեցին վանքից:

Մաքսիմոս Մարգունիոսի բնագրում այս դեպքերը, մյուս երկու բնագրերի համեմատ, նկարագրվում են ավելի մանրամասն եւ ավելի հասկանալի լեզվով:

Ելնելով այն փաստից, որ վերը նշված քննության առարկա երեք հունական բնագրերում սուրբ Թեոդորայի վարքի մասին նյութը չափազանց համառոտ է, կփորձենք պարզել, թե ինչ աղբյուրներից են օգտվել հայկական հայսմավուրքային հեղինակները՝ այս վարքի հակիրճ տեղեկություններն ավելի ընդարձակ եւ նոր նյութերով լրացնելով: Այդ նպատակով օգտագործել ենք Հովսեփ Կ. Պոլսեցու ժամանակակից Սիմեոն Մետափրաստեսի՝ սուրբ Թեոդորայի վարքի ընդարձակ նկարագրությունը[7], որ բովանդակային առումով շատ նման է Հովսեփ Կ. Պոլսեցու բնագրին, սակայն ավելի ընդարձակ է:

Պարզելու համար, թե արդյո՞ք Հովսեփ Կ. Պոլսեցու բնագիրը ընդօրինակությունն է Սիմեոն Մետափրաստեսի բնագրի, կատարել ենք երկու տեքստերի մանրամասն համեմատություն, որի արդյունքում աչքի են զարնվել հայկական բնագրում որոշակի տարբերություններ, առկա են հավելյալ փոքրիկ պարբերություններ, որոնք չունի հույն հեղինակը:

ՀՈՒՆԱԿԱՆ ԲՆԱԳՐՈՒՄ ՊԱԿԱՍՈՂ ՀԱՏՎԱԾՆԵՐ

ա) Երբ սուրբ Թեոդորան մեղանչում է եւ գիտակցում իր կատարած մեղքը, նա զղջում է եւ վերջնականապես որոշում հրաժարվել աշխարհիկ կյանքից՝ նվիրվելով ճգնակեցական կյանքին: Սակայն ամուսնու հետաքրքրությունից խուսափելու համար, նա որոշում է արական վանք գնալ եւ կերպարանափոխվելով՝ փղամարդու հագուստներ է հագնում: Այս հատվածի նկարագրության մեջ ի տարբերություն Մետափրաստեսի բնագրի, Հովսեփ Կ. Պոլսեցին (Ծերենցը ևս) ունի հետեւյալ տողերը՝ **«Եւ յարուցեալ գնաց ի տուն եւ գերծեաց զգլուխն իւր առնարար, եւ մերկացաւ զկանացի զգեստն: Եւ զոսկին հանեալ ի բազկաց իւրոց եւ ի պարանոցէն եւ յականջացն»:**

բ) Մետափրաստեսը չունի նաեւ մի հատված, որը շարունակությունն է այն նկարագրության, թե երբ Թեոդորան հասնում է Ութուրասնեկի վանք եւ դուռը բախելով խնդրում վանականներին իրեն ներս թողել, վանականները նրան փորձության ենթարկելով՝ ողջ գիշեր թողնում են դրսում, մտածելով, որ եթե չվախենա գազաններից եւ մինչեւ լույս

7 **J. P. Migne,** Ελληνική Πατρολογία, τ. 115, Αθήναι 1994, էջ 665-689.

դիմանա փորձությանը, դրանից հետո նրան ներս կընդունեն: Այս հատվածից հետո Հովսեփ Կ. Պոլսեցին ունի նաև հետևյալ նախադասությունը՝ «**Եւ ի գիշերին յայնմիկ երթեալ գազանացն մինչեւ ի դուռն եւ յորժամ տեսանէին զնա, փախչէին**»:

գ) Հաջորդ հատվածը, որ պակասում է հունական բնագրում, հետևյալն է՝ «**Եւ այնպես ճգնութեամբ կատարեաց զաղաւթսն: Եւ այնպէս կացեալ զութ ամ**»: Այս հատվածը զետեղված է նրան վանահոր կողմից ընդունելուց հետո, այսինքն Թեոդորան ընդունվում է վանք, ապա ութ տարի ճգնում այնտեղ եւ դրան հետեւող շարունակությունը, որ վերաբերում է նրա ամուսնու որոնմումներին, փաստորեն տեղի է ունենում սուրբի անհետացումից ութ տարի անց:

ՆՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ՇԱՐԱԴՐՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՀՈՒՆԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐՈՒՄ

ա) Ինչպես նշեցինք Հոսեփ Կ. Պոլսեցու եւ Սիմեոն Մետափրաստեսի բնագրերում գոյություն ունեն հետաքրքիր տարբերություններ, որոնցից առաջինին հանդիպում ենք սուրբ Թեոդորայի ծոմապահության մասին պատմող հատվածում, որը բացակայում է Գրիգոր Ծերենցի մոտ: Այսպիսով, ըստ Հովսեփ Կ. Պոլսեցու՝ «**Եւ սկսաւ պահել երկուս-երկուս աւուրս եւ ապա ճաշակէր, եւ զծառաութիւնն անպակաս կատարէր: Եւ յետ տարոյ միոյ յաւել ի պահս եւ ի չորս աւուրն միայն ճաշակէր, եւ յետ միւս եւս տարոյ զվեց աւր շաբաթոյն պահէր: .... Եւ ապա զգեցաւ մազեղէնս մերկ ընդ անձինն եւ ի վերայ պարէգաւտ**»: Նույն հատվածն ըստ Մետափրաստեսի՝ սկզբում նա օրը մեկ անգամ էր ուտում, իսկ հետո՝ երկու օրը մեկ անգամ: Այնուհետեւ նա վանականների միջնորդությամբ վանահորից թույլատվություն է սպանում շաբաթը մեկ անգամ ուտելու համար, եւ քանի որ նա սպանում է այդ թույլտվությունը, նաեւ երկրորդ խնդրանք է ուղղում նրան՝ մերկ մարմնին մազեղեն քուրձ հագնելու[8]: Նույն այս մասին որոշակի հավելմամբ հունական «Ο Μέγας Συναξαριστής της Ορθόδοξου Εκκλησίας»[9] ում, որ մեծմասամբ ազդված է Սիմեոն Մետափրաստեսից, կարդում ենք, թե սուրբ Թեոդորան օրը մեկ անգամ հաց ու ջուր էր ուտում՝ «Και πρτον τρωγε μίαν φορὰν τὴν ἡμέραν ἀρτον Καί ὑδωρ»:

բ) Չափազանց հետաքրքիր է նաեւ սուրբ Թեոդորայի կատարած հրաշքների մասին պատմող հատվածներում (ի դեպ Ծերենցը մոտ հրաշքների հատվածը եւս չունի) առկա տարբերությունները:

Առաջին հրաշքը վերաբերում է Թեոդորայի՝ մարդակեր կոկորդիլոսին աղոթքով սպանման մասին: Հոսեփ Կ. Պոլսեցին հակիրճ պատմում է՝ «զի զմարդասպան կոկորդեղոսն աղաւթիւք սպան, եւ զմերձակայ գազանն նշանաւ խաչին սատակեաց»: Ինչ վերաբերում

8 **J. P. Migne,** Ελληνική Πατρολογία, τ. 115, Αθήναι 1994, էջ 673.
9 **Ματθαίος Λάγγη,** Ο Μέγας Συναξαριστής της Ορθόδοξου Εκκλησίας, τ. Θ΄, Αθήναι, 1995, էջ 258.

է Մեսրափրասրեսի տարբերակին, ապա համաձայն նրա, վանքին մոտ մի լիճ կար, որից մարդիկ ջուր էին տանում: Սակայն այնտեղ հայտնված մարդակեր կոկորդիլոսը ուտում էր թե՛ լճից ջուր տանելու եկած մարդկանց, թե՛ կենդանիներին, նույնիսկ Գրիգոր եպարքոսը զինվորներ է դնում լճի մերձակայքում՝ մարդկանց պաշտպանության համար: Վանքի վանահայրն իմանալով այդ մասին՝ մտածում է, որ Աստծուց տրված իր շնորհով եւ հրաշք գործելու զորությամբ միայն Թեոդորան է ի զորու վերացնել այդ գազանին: Այդ պատճառով նա սափոր է տալիս Թեոդորային եւ ուղարկում լճից ջուր բերելու: Երբ նա մոտենում է լճին՝ Տիրոջ հրաշքով կոկորդիլոսը նրան դնում է իր մեջքին եւ տանում լճի խորքից ջուր վերցնելու, ապա նրան կրկին ցամաք է բերում: Ցամաք դուրս գալուն պես Թեոդորան աղոթքով սպանում է գազանին եւ մարդկանց ազատում վտանգից:

գ) Հաջորդ հրաշքն ամբողջովին տարբերվում է հունական տարբերակից: Այստեղ Հոսեփ Կ. Պոլսեցին խոսում է առյուծի բերանից մի մարդու փրկելու, բժշկելու եւ գազանին սպանելու մասին՝ «եւ զայր մի ի բերանոյ առիւծոյ բանիւն Աստուծոյ յափշտակեաց, եւ ձեռն դնելով զգիշատեալ անդամսն ողջացոյց, եւ գազանն սատակեցաւ»:

Սիմեոն Մեսրափրասրեսը եւ նրանից ազդված վերոհիշյալ հունական Հայսմավուրքը բոլորովին այլ տարբերակ են ներկայացնում:

Վանականներից ոմանք նախանձելով սուրբ Թեոդորայի հրեշտակակրոն վարքին եւ նրան ուղղված դրվատանքներին՝ որոգայթ են լարում նրա դեմ: Վանահորից գաղտնի մի նամակ են տալիս նրան, որ տանի անապատի խորքում ճգնող ինչոր մեկին, վստահ լինելով, որ անծայրածիր անապատում նա վայրի գազանների կամ թունավոր գեռունների զոհ կդառնա: Վանականների մտադրությունից անտեղյակ Թեոդորան համաձայնում է եւ անապատի խորքն ուղղվում: Վանքից դուրս գալով՝ նա կորցնում է ճանապարհը եւ չի իմանում, թե ո՞ր կողմը գնա: Հանկարծ այնտեղ մի վայրի գազան է հայտնվում, որը դառնում է նրա ուղեկիցը եւ առաջնորդում մինչեւ նամակի հասցեատիրոջ խուցը: Այնուհետեւ կենդանին սպասելով դրսում՝ Թեոդորային նաեւ վերադարձի ողջ ճանապարհին է ուղեկցում: Երբ սուրբը հասնում է վանք եւ գնում է պատասխան նամակը վանահորը հանձնելու, վայրի գազանը հարձակվում է դռնապահին հոշոտելու եւ իր սուր ճանկերը խրում նրա մարմնի մեջ: Բարձրացած աղմուկի վրա դուրս են վազում վանական եղբայրները, սակայն բացի Թեոդորայից ոչ ոք չի համարձակվում մոտենալ նրանց: Սուրբը մոտենում, գազանի երախից փրկում է դռնապահին եւ Տիրոջ անունով սպանում գազանին: Այնուհետեւ նա յուղով օծում է դռնապահի վիրավոր անդամները եւ փրկում նրան: Սուրբ Թեոդորան չէր ցանկանում, որ իր կատարածի մասին եղբայրներն իմանան, սակայն արդեն առավոտյան բոլորը, ինչպես նաեւ վանահայրը տեղեկանում են, որ նա մահվան վտանգից փրկել է մարդուն եւ սպանել գազանին:

Անշուշտ այս պատմությանը հետեւում է նաեւ սուրբ Թեոդորայի ու վանահոր միջեւ տեղի ունեցող զրույցը, որը հարկ չկա ներկայացնելու:

դ) Հաջորդ տարբերությունը վերաբերում է Իննակնյա վանքում տեղի ունեցած դեպքին,

որտեղ սուրբ Թեոդորան գիշերը ուղտերի հետ իջեւանում է: Նախ վանքի անվանման կապակցությամբ ասենք, որ Սիմեոնը եւս այն անվանում է Իննակնյա (Ἐνάτου), իսկ «Ο Μέγας Συναξαριστής της Ορθόδοξου Εκκλησίας»[10] ում նշվում է, որ վանքի անունը Մոնիդրիոն (Μονύδριον) է եւ Իննակնյա է կոչվում, որովհետեւ գտնվում է Ալեքսանդրայից իննը վերստ հեռու: Այն ժամանակ նրանք ունեցել են հեռավորության չափման իրենց միավորը, որի թվերով էլ համարակալվել են ճանապարհների միջեւ ընկած տարածությունները: Նույնը նաեւ Ութուրասնեկի վանքի պարագային: Ինչ վերաբերում է ըստ Հովսեփ Գ. Պոլսեցու վանահոր աղջկա կողմից Թեոդորայի զրպարտության պատմությանը, ապա Մեսրափրասրեսը նշում է, որ նա ոչ թե վանահոր աղջիկն էր, այլ՝ վանքում ապրող վանականներից մեկի բարեկամուհին: Ի դեպ այս վարքի բուն թեման համարվող սույն պատմությունը հունական վերը նշված երեք հայսմավուրքներից միայն Մաքսիմոս Մարգունիոսն ու Synaxarium Eccl. Constantinopolitanae ն են, որ շատ համառոտ, բայց ինչ-որ չափով խոսում է այս մասին, իսկ Վասիլիոսի մոտ միայն մեկ նախադասությամբ նշվում է, որ սուրբ Թեոդորան սատանայի կողմից բազում փորձությունների եւ տառապանքների է ենթարկվել:

Բացի հայսմավուրքային նյութի որոշակի տարբերություններից, համեմատության ժամանակ հանդիպում ենք նաեւ բովանդակության հերթականության խախտման: Այսպես, Հովսեփ Գ. Պոլսեցու բնագրում սուրբ Թեոդորային վանքից երեխայի հետ միասին արտաքսման հատվածից հետո սկսում է նրա հովիվների մոտ գնալու եւ նրանց ոչխարների կաթով երեխային կերակրելու պարբերությունը, ապա մեկ պարբերություն պատմում է սատանայի հայտնվելու եւ նրան փորձության ենթարկելու հատվածը: Հետո դարձյալ վերադառնում է խիստ ճգնության արդյունքում Թեոդորայի բույսերով ու ծովի ջրով սնվելու եւ արտաքին տեսքի խիստ փոփոխության մասին պարբերությանը, որին դարձյալ հետեւում են սատանայի փորձությունները:

Ի տարբերություն Հովսեփ Գ. Պոլսեցու, Մեսրափրասրեսը նույն նյութը շարադրում է հերթականությամբ, այսինքն սկզբում երեխային կաթով կերակրելու համար հովիվների մոտ գնալու մասին, ապա նրա բույսերով, բայց ոչ թե ծովի, այլ լճի ջրով սնվելու եւ խիստ ճգնությունից նրա արտաքին տեսքի փոփոխության, որից հետո արդեն հերթականությամբ սատանայի փորձությունների մասին:

Այսպիսով, դատելով սուրբ Թեոդորայի վարքի հայկական եւ հունական հայսմավուրքային բնագրերի համեմատությունից՝ կարող ենք պնդել, որ չնայած երկու բնագրերի ընդհանուր նմանությանը, Հովսեփ Գ. Պոլսեցին օգտվել է նաեւ մեկ այլ աղբյուրից՝ հետեւելով տվյալ ժամանակաշրջանի հայսմավուրքային կոստանդինուպոլսյան ավանդությանը: Անշուշտ, այս փաստի արձանագրմանը մեզ համար հիմք են հանդիսացել ոչ միայն սուրբ Թեոդորայի վարքում, այլ նաեւ սուրբ Հովհաննես Պահեցողի վարքի (սեպտեմբերի 2), սուրբ Անաստասիոս (հունվարի 22) Պարսիկի վկայաբանության մեջ հանդիպող էական փաստերը:

10 Տես անդ, էջ 260-261: